

**Նելլի Տեր-Վարդանովա**

Վ. Բոյուսովի անվան պետական համալսարան, Անգլերենի ամբիոն

[nelltvartanova@gmail.com](mailto:nelltvartanova@gmail.com)

**Անփոփագիր**

Մույն հոդվածում քննության են առնվում անգլերենի և հայերենի ասացվածքները, որ երկու լեզուներում էլ լեզվական ուրույն շերտ են կազմում: Գալով ժողովրդական բանահյուսությունից՝ դրանք չեն կորցրել իրենց կենսունակությունն ու արդիականությունը, սիրված և ընդունված են ժողովրդի կողմից: Որոշ ասացվածքներ պատմական խորը հիքեր ունեն, գալիս են դեռ վաղ անցյալից: Կան նաև ժամանակի ընթացքում ստեղծված և մարդկանց կողմից արագ ընդունված տարբերակներ: Բոլոր դեպքերում, լեզվից լեզու փոխանցվելիս լեզվական այս միավորները պետք է պահպանեն իրենց ասելիքն ու մշակութային ինքնատիպությունը: Սա է պատճառը, որ ասացվածքների թարգմանությունը որոշակի բարդություններ է պարունակում, որոնց լուծման ուղիները տրված են հոդվածում: Բոլոր դեպքերում, թարգմանական համարժեքը պետք է կարողանա փոխանցել բնագրի կոլորիտն ու ասելիքը: Երբեմն հարցին կարող է օգնել հետ թարգմանությունը՝ հանդիսանալով կատարված թարգմանության որակի և ճշգրտության լավագույն քննություն: Ինչպես ցանկացած լեզվական միավորի պարագայում, դարձվածքների դեպքում ևս լավագույն համարժեքությունն այն է, երբ պահպանված է աղբյուր լեզվում նրա ունեցած կոլորիտը, շունչն ու գաղափարական հենքը, և միևնույն ժամանակ, հասկանալի և ընդունված է թիրախ լեզվի ունկնդրի և ընթերցողի համար:

**Հիմնաբառեր.** Ասացվածք, անգլերեն, հայերեն, թարգմանական համարժեք, լեզվամտածողություն, բանահյուսություն:

**Ներածություն**

Առաձներն ու ասացվածքները, լինելով լեզվի ակտիվ բառապաշարի մաս, միշտ էլ խնդրահարույց են իրենց կիրառության, ինչպես նաև՝ ճիշտ թարգմանության առումով: Մույն հոդվածի արդիականությունը կայանում է նրանում, որ անգլերենի և հայերենի ասացվածքների թարգմանումը մերօրյա է և շարունակ լուծումներ է պահանջում: Հենց այդ լուծումները գտնելն ու տարբերակելն էլ հանդիսանում է մեր նպատակը: Հոդվածի ուսումնասիրման օբյեկտը անգլերեն և հայերեն լեզուներն են, իսկ առարկան՝ դրանց ասացվածքներն ու թևավոր խոսքերը: Ուսումնասիրությունը կատարվել է համեմատական և վերլուծական մեթոդների հիման վրա:

Լեզուն բարդ ու բազմագործառույթ համակարգ է, որտեղ յուրաքանչյուր տարր ունի իր ուրույն կառուցողական և առանձնահատուկ տեղն ու նշանակությունը: Միևնույն ժամանակ, այդ համակարգի ամեն մի օղակ փոխկապակցված է մյուսներին՝ հաճախ գերադասվելով կամ ստորադասվելով նրանց: Մյուս կողմից, այլ դիտանկյունից գնահատելու պարագայում, լեզուն բաց և զարգացող համակարգ է, որտեղ ոչինչ

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

հաստատուն և անփոփոխ չէ: Այն հասարակության ինքնատիպ զարկերակն է և լավագույնս արտացոլում է այն բոլոր փոփոխություններն ու զարգացումները, որ տեղի են ունենում հասարակության կյանքում: Սա է պատճառը, որ հասարակության կյանքից դուրս մնացող երևույթներն ու առարկաներն ինքնաբերաբար դուրս են մնում նաև լեզվի ակտիվ բառապաշարից: Սրան հակառակ, ցանկացած առարկայական նորաբանություն անմիջապես ստանում է նաև լեզվական ձևակերպում՝ համալրելով դրա առօրյա – խոսակցական կամ գիտական բառապաշարը:

Լեզվի ուրույն, առանձնահատուկ շերտն են կազմում առածներն ու ասացվածքները, որոնք համեմուն են այն ուրույն կոլորիտով ու գունազեղությամբ: Լինելով ժողովրդական կենդանի խոսակցական բանաձևային ասույթներ՝ առած – ասացվածքները բաղկացած են որոշակի թեմա և իմաստ արտահայտող բառերից: Դրանք ժողովրդի հարուստ կենսափորձից բխող սեղմ ու պատկերավոր իմաստալից ընդհանրացումներ են այդ նույն ժողովրդի բարքերի, կենցաղի վերաբերյալ: Ի տարբերություն առածի, որի բուն իմաստն արտահայտվում է անուղղակի, միջնորդավորված, ասացվածքն իրականությունն արտացոլում է ուղղակի եղանակով: Թե՛ մեկի, թե՛ մյուսի համար հիմք են ծառայել տարբեր դարերի աշխարհիկ, կրոնական, պատմափիլիսոփայական ու հրապարակախոսական տարբեր գրավոր հուշարձաններում արձանագրված իմաստալից ասույթներն ու պատկերավոր արտահայտությունները: Մուտք գործելով բանավոր խոսքի մեջ՝ դրանք ժամանակի ընթացքում ձեռք են բերում բանահյուսական երանգ՝ համալրելով ժողովրդական ասացվածքներն ու առածները:

Ցանկացած առածի ծագումնաբանությունը պարզելը բարդ է և հաճախ անհնարին: Անգլերենի ասացվածքների պատմական հիմքերը բազմաբնույթ են՝ պայմանավորված անգլերեն լեզվի և մշակույթի զարգացման առանձնահատկություններով: Լեզվական այդ ինքնատիպ տարրերի՝ ասացվածքների առատությունն անգլերենում պայմանավորված է նաև աշխարհի մյուս ազգերի ու մշակույթների հետ անգլերենի շփման ու փոխներթափանցման գործոններով:

Ըստ այդմ, անգլերենի ասացվածքներն ավանդաբար բաժանվում են երկու՝ բնիկ և փոխառված տարատեսակների, ընդ որում՝ փոխառություններն արված են հիմնականում լատիներենից և ֆրանսերենից [Ivanov, 864]: Բնիկ անգլերեն ասացվածքների պատմական արմատներն աղերսվում են ժողովրդական բանահյուսության, Մուրբ գրքի և գեղարվեստական գրականության, օրինակ՝ Շեքսպիրի երկերի հետ [Zimovets, 27]: *Սսովաձաշնչից* են վերցված այնպիսի անգլիական ասացվածքներ, ինչպիսիք են.

*A wise son brings joy to his father.*

*Lazy hands make for poverty.*

*The fear of the Lord is the beginning of wisdom.*

Բերենք մի քանի օրինակներ՝ վերցված ժողովրդական բանահյուսությունից.

*Don't look at all you see and don't listen to all you hear.*

*A borrowed horse has hard hoofs.*

*Eaten bread is soon forgotten.*

Եթե ասովաձաշնչյան ասացվածքները վերաբերում են հնագանդությանը, ճշտին ու սխալին, հայրերի և որդիների փոխհարաբերություններին և նմանատիպ երևույթների,

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ապա բանահյուսությունից վերցված ասացվածքները հիմնականում ներկայացնում են կենցաղային իրավիճակներ, որ կյանքի փորձ և օրինակ կարող են ծառայել ուրիշների համար: Ինչ վերաբերում է շեքսպիրյան ասույթներին, ապա սրանք բազմաբնույթ են, ինչպես օրինակ.

*All that glitters isn't gold.*

*The world is a stage.*

*Clothes make the man.*

*Brevity is the soul of wit.*

Ըստ ասացվածքների բառարանի՝ անգլերենի ասացվածքները, իրենց բառային կազմից ելնելով, կարելի է բաժանել երեք տարատեսակների [Oxford Dictionary of Proverbs, 3].

• Փոքրիկ դատողություններ, որ արտահայտում են բացարձակ ճշմարտություններ, օրինակ՝

*Absence makes the heart grow fonder.*

*Actions speak louder than words.*

• Առօրյա կյանքից վերցված մտքեր, օրինակ՝

*Don't put all your eggs in one basket.*

*Strike while the iron is hot.*

*An apple a day keeps the doctor away.*

• Ասացվածքներ՝ վերցված ավանդական իմաստասիրություններից և բանահյուսությունից, օրինակ՝

*After dinner rest a while, after supper walk a mile.*

*Many hands make light work.*

*The forbidden fruit is always the sweetest.*

Ինչ վերաբերում է հայերենի առած – ասացվածքներին, ապա դրանք ստեղծվել և պահպանվել են նրա գոյության բոլոր ժամանակներում՝ հանդիսանալով հայ ժողովրդական բանահյուսության հնագույն և հարուստ ժանրերից մեկը: Բազմաթիվ առանձին ուսումնասիրություններին զուգահեռ՝ 1951 թվականին հրատարակվում է Ա. Ղանալանյանի «Առածանի» համահավաք ժողովածուն, որտեղ ներկայացված են շուրջ 40 հազար հին ու նոր հայկական առածներ [Ղանալանյան, 26]:

Ա. Ղանալանյանի վկայմամբ՝ «Հայաստանում հայտնի հնագույն գրավոր հուշարձաններից ժողովրդական առած - ասացվածքների համար նյութ են մատակարարել միջազգային բնույթի երեք հուշարձան» [Ղանալանյան, 25]: Դրանցից առաջինն ու ամենածավալունը «Աստվածաշունչն» է իր Հին ու Նոր կտակարաններով: «Աստվածաշնչից» որոշակի վերամշակումներով ժողովրդին են հասել այնպիսի ասացվածքներ, ինչպիսիք են.

*Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է [Հին կտակարան, ԺԸ]:*

*Հարուստի խոսքն անցնում է, աղքատինը՝ մոռացվում [Հին կտակարան ԺԳ]:*

*Համբերությունը կյանք է [Նոր կտակարան, Ժ]:*

*Իր աչքի գերանը թողած՝ ուրիշի աչքի փուշն է ման գալիս [Նոր կտակարան, Է]:*

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայերենում լայն կիրառություն ունեցող ասացվածքների հաջորդ աղբյուրը անտիկ նշանավոր փիլիսոփաների՝ Արիստոտելի, Սոկրատեսի, Պլատոնի, Դիոգենեսի և մյուսների ստեղծագործությունն է: Նրանցից մեզ են հասել քաղաքական, կրոնական, բարոյախրատական բնույթի բազմաթիվ ասացվածքներ, ինչպիսիք են.

*Աղքատը հացի կարոտ է, հարուստը՝ ամեն ինչի* [Ղանալանյան, 24]:

*Գորգորանից մի՛ վախեցիր, սուս ու փուսից վախեցիր* [Ղանալանյան, 37]:

*Իսկական բարեկամը նեղության պահին է ճանաչվում* [Ղանալանյան, 50]:

Հայերեն առած-ասացվածքների համար աղբյուր հանդիսացած երրորդ խոշոր աղբյուրը Խիկար իմաստունի «Պատմությունն» է [Ղանալանյան, 31]: Այստեղից մեզ են հասել տարաբնույթ, բայցև մեծամասամբ սեփականատիրական հարցերին ու մարդկային էությանն առնչվող այնպիսի առակներ, ինչպիսիք են.

*Աչքածակի աչքը միայն հողով է կշտանում* [Գիրք պատմութեան, 96]:

*Ներքնում նստիր, որ վերնում քեզ տեղ տան* [Գիրք պատմութեան, 94]:

*Արյուն թափողը արյունով էլ կգնա* [Գիրք պատմութեան, 94]:

Պետք է փաստել, որ կան բառապաշարային, թեմատիկ, սյուժետային տարրեր, որ ընդհանուր են շատ լեզուներում և մշակույթներում: Բացառություն չեն և դարձվածքներն ու թևավոր խոսքերը, որոնք, լինելով կյանքի, հասարակական հարաբերությունների հստակ գնահատականներ, հաճախ նույնությամբ կամ մասամբ կրկնվում են երկու և ավելի լեզվամտածողության կրողների մոտ: Մասնավորապես, արքետիպային են գրեթե բոլոր կազմախոսական դարձվածքները՝ կապված մարդու մարմնի մասերի (աչք, ճակատ, մազ, գլուխ, քիթ, բերան, շրթունք, ձեռք, ոտք, լեզու, սիրտ, արյուն և այլն) անվանումների իմաստավորման և խորհրդանշական տարբեր գործառույթների հետ:

Արքետիպային հենքեր ունեցող նման ընդհանուր դարձվածքներ առկա են նաև անգլիական և հայկական ժողովրդախոսակցական խոսույթներում: «Լեզուն իրեն քաշել» դարձվածքը իմաստային երանգավորումներով հանդես է գալիս մի շարք այլ տարատեսակներով, ինչպիսիք են, օրինակ, «Լեզուն զսպել», «Լեզուն ատամների տակ պահել», «Լեզուն կապ» կամ «Լեզվակապ», որոնց համապատասխանում են, ըստ տրված հերթականության, հետևյալ անգլերեն դարձվածքները՝ hold one's tongue, shut (up) one's head, (keep one's mouth shut, keep one's tongue behind one's teeth), tongue-tied:

Շատ ու շատ ասացվածքներ ևս արքետիպային են և կարող են հանդիպել մեկից ավելի լեզուներում, ինչը հեշտացնում է նրանց վերարտադրումն ու անցումը մի լեզվից մյուսին՝ առանց կառուցվածքային և իմաստային կորստի: Խոսելով ասացվածքների թարգմանության մասին՝ չենք կարող չանդրադառնալ մի շարք դրույթների, որ կօգնեն այս հարցի հստակ պարզաբանմանը:

Անդրադառնալով տեքստի տեսակներին, իբրև թարգմանության առարկա՝ լեզվաբան Կ. Ռայասն առանձնացնում է տեքստերի երեք տարատեսակներ՝ տեղեկատվական (informative), հուզարտահայտչական (expressive) և դրողական (operative) [Գաբրիելյան, 192], որոնց դեպքում համապատասխանաբար կարևորվում են աղբյուր լեզուն, տեքստային հաղորդագրությունն ու թիրախ լեզուն: Իբրև հուզարտահայտչական տեքստային միավորներ՝ ասացվածքների դեպքում շեշտը պետք է դնել նրա բովանդակության, արտահայտած հուզական աշխարհի, կոլորիտի ու լեզվամտածողության առավել ճշգրիտ և լավագույն փոխանցման վրա: Սա նշանակում է,

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

որ ասացվածքների թարգմանության ժամանակ պետք է կատարել ոչ թե բառ առ բառ, այլ իմաստային վերարտադրում: Միևնույն ժամանակ, հնարավորության պարագայում պետք է առաջինը փորձել գտնել տվյալ ասույթի համարժեք տարբերակը թիրախ լեզվում, որի բացակայության պարագայում օգտվել թարգմանաբանական այլ հնարներից:

Անգլերեն ասացվածքների հայերեն թարգմանության ժամանակ (մի բան, որ ճշմարիտ կլինի պնդել ցանկացած այլ լեզվական գույգի պարագայում), կարելի է հանդիպել հետևյալ հնարավոր իրավիճակների.

1. Թիրախ լեզվում (Target Language) առկա է աղբյուր լեզվից (Source Language) վերցված թարգմանվելիք ասացվածքը: Օրինակ՝

*A friend to all is a friend to none.*

*Բոլորի ընկերը ոչ մեկի ընկերը չէ:*

*Best defense is offence.*

*Լավագույն պաշտպանությունը հարձակումն է:*

2. Թարգմանվող ասույթի կիսով չափ համընկնումը, երբ թիրախ լեզվում առկա է տվյալ ասույթի նույնական տարբերակը՝ լինելով մեկ- երկու բառ ավել, պակաս կամ տարբեր: Օրինակ՝

*A friend in need is a friend indeed.*

*Բսկական ընկերը ճանաչվում է դժբախտության մեջ:*

*A tree is known by its fruit.*

*Պտուղը ծառից հեռու չի ընկնում:*

*Fortune is easy found but hard to be kept.*

*Երջանկություն գտնելը հեշտ է, պահելն է դժվար:*

3. Թիրախ լեզվում պարզապես չկա տվյալ ասացվածքի նույն կամ նմանատիպ համարժեքը, և թարգմանիչը ստիպված է դիմել իմաստային թարգմանության՝ գտնելով իմաստով համարժեք մեկ այլ ասացվածք: Օրինակ՝

*Nothing must be done hastily but killing of the fleas.*

*Շտապողին տղա չի ծնվում:*

*Dumb dogs are dangerous.*

*Մարմանդ գետից վախեցիր:*

4. Հնարավոր է տալ տվյալ ասացվածքի և՛ նույնական, և՛ իմաստային թարգմանությունը: Հաշվի առնելով այն փաստը, որ խնդրո առարկա երկու լեզուներն էլ հարուստ են ասացվածքներով՝ սա, թերևս, գերիշխող տարբերակն է: Օրինակ՝

*Love cannot be forced.*

1)Մերը գոռով չի լինում:

2)Մրտին չես հրամայի:

*Love is blind as well as hatred.*

1)Մերը կույր է, ինչպես և ատելությունը:

2)Մերն աթարին էլ է կպնում:

Ասացվածքն ու թևավոր խոսքերը, լինելով ժողովրդական բանահյուսության մի մասը, ունեն նաև իրենց բարբառային տարատեսակները՝ համեմված յուրահատուկ

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

բառապաշարով ու կոլորիտով: Հայերենից անգլերեն թարգմանելիս բարբառային հենքով ասացվածքների թարգմանությունն էլ ավելի է բարդանում: Այսպիսի իրավիճակի հանգուցալուծումը ըստ իմաստի թարգմանությունն է: Թարգմանված տարբերակում, սակայն, բացակայում են բնագիր տեքստի կոլորիտն ու հուզարտահայտչական ողջ ներուժը: Օրինակ՝

*Ախպոր տղա, ջան տղա, քվոր տղա, շան տղա:*

*Brother's son is loved more than sister's.*

Այս հին հայկական ասացվածքը թարգմանելիս թարգմանիչը բախվում է մի շարք խնդիրների: Նախ և առաջ, անգլերենում բացակայում է *ջան* բառի ճշգրիտ համարժեքը, և թարգմանությունը կարող է լինել միայն իմաստային: Մյուս կողմից, անգլերենում *եղբոր կամ քրոջ որդի* արտահայտությունը ունի հստակ բառային դրսևորում՝ *nephew*, ինչը հայերենում բացակայում է: Վերոբերյալ թարգմանության մեջ, սակայն, *nephew* բառով չէր հասկացվի՝ խոսքը եղբորորդու, թե քրոջ որդու մասին է, և թարգմանությունը դարձյալ արվել է իմաստային – բացատրական: Եվ վերջապես, որքան էլ բառապաշարը ճշգրիտ թարգմանվի, անհնար է անգլիական լեզվամտածողության կրողին տեղ հասցնել և բացատրել, թե ինչու և ինչպես կարելի է եղբոր որդուն ավելի սիրել, քան քրոջ որդուն: Այդ հարցի պատասխանը պետք է փնտրել դարեր ի վեր հայից հային փոխանցված այն գաղափարի մեջ, թե արական սեռի ներկայացուցիչն իր իրավունքներով առավել բարձր է և կարևոր, քան իգականը: Անգլերեն և, առհասարակ, եվրոպական լեզվամտածողության պարագայում սա կոդիտարկվի իբրև գենդերային խտրականություն:

Բերենք մեկ այլ օրինակ.

*Սշխարհն աղով, աղն էլ համով:*

*Everything should be in measure.*

Թարգմանությունը դարձյալ արված է իմաստային, քանի որ ճշգրիտ թարգմանությունը ենթադրում է նաև բացատրական ենթատեքստ: Պետք է տեղ հասցվի թիրախ լեզվի ընթերցողին, թե որքան է հայկական մշակույթում և խոհանոցում կարևորվում աղի օգտագործումը, ինչը, սակայն, չարաշահել պետք չէ: Ահա այս փաստն էլ հիմք է հանդիսացել դարձվածքային վերոբերյալ միավորի ստեղծման համար:

Հետևյալ օրինակում դարձյալ խտացված են մեր պատմությունը, նրա ցավալի դրվագները, ինչը դժվարացնում է թարգմանությունը.

*Բերդը ներսից կքանդվի:*

*Enemy can be a close person.*

Բառապաշարը, մի փոքր ավելի կամ պակաս, հնարավոր է վերարտադրել: Բայց *բերդ* բառը անգլերեն ընթերցողին ոչինչ, չի ասի, եթե նրան չբացատրվի, որ մեր պատմության ընթացքում շատ ու շատ անառիկ բերդեր ընկել են հենց հայ դավաճանի ձեռքով (Հալիձոր, Թմկաբերդ և այլն):

*Գեղը կանգնի, գերան կկոտրի:*

*When together everything is easy.*

Վերոբերյալ ասացվածքում խտացված և ներկայացված է հայ ժողովրդի մեկ այլ հատկանիշ՝ դժվարության պահին միավորվելու, միասնական պայքարելու կամքը: Ճշգրիտ արված թարգմանության դեպքում անգամ դժվար է փոխանցել այդ հերոսական, անկոտրում ոգին:

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

*Գնա մեռի, արի սիրես:*

*You will be valued after death.*

Թարգմանությունն այս օրինակում դարձյալ արված է բացատրական, քանի որ անգլերենում չկա հին հայկական այս ասացվածքի համարժեքը: Բերված ասացվածքում արտացոլվում է մեր ժողովրդին բնորոշ մի հատկանիշ, երբ շատ հաճախ մեր հանճարները (և ինչու չէ, սովորական մարդիկ նույնպես) հալածվում կամ թերարժևորվում են կենդանության օրոք՝ մահից հետո միայն ստանալով իրենց արժանի գնահատականը:

Միևնույն ինդրին ենք բախվում նաև անգլերեն ասացվածքների հայերեն թարգմանության ժամանակ: Անգլիական կյանքին ու կենցաղին, լեզվամտածողությանը բնորոշ շատ ասացվածքներ, մաղթանքներ և այլն հայերեն թարգմանվում են հիմնականում բացատրական եղանակով կամ այլ համարժեք տարբերակի ներկայացմամբ: Օրինակ՝

*Break a leg!*

*Գործերիդ հաջողություն:*

Բերված անգլերեն արտահայտությունն առաջին անգամ գործածվել է մոտ 1920-ականներին [World Wide Words, 54]: Այն գործածվել է հիմնականում թատերական գործիչների կոցմից՝ բեմ դուրս գալուց առաջ իրար հաջողություն մաղթելիս: Գրականության մեջ առաջին անգամ հայտնվել է իռլանդացի վիպասան Ռ. Լինդի հրատարակած հոդվածում 1921 թվականին [Littell, 44]: Ինչպես երևում է վերոբերյալ արտահայտության անգլերեն և հայերեն տարբերակների համեմատության ժամանակ, միևնույն միտքը տրվել է հակառակ իմաստով: Այդ երևույթի բացատրությունը տալու համար դարձյալ պետք է գնալ դեպի ժողովուրդը, նրա վարք ու բարքը: Անգլիացիները, լինելով սնահավատ, կարծում են, թե դիմացինին լավը մաղթելիս վատը տեղի կունենա և հակառակը: Մրան հակառակ՝ հայ լեզվամտածողության մեջ ավեն ինչ ընկալվում է բառացի, ուստի հաջողություն մաղթելիս հայը երբեք հակառակը չի ասի:

Բերենք մեկ այլ օրինակ.

*Curiosity killed the cat.*

*Հետաքրքրասիրությունը սպանում է մարդուն:*

Ասացվածքը ի սկզբանե վերաբերել է անհարկի գիտափորձերի վտանգին և ի հայտ է եկել 19-րդ դարի վերջերից [Strategem, 12]: Հետագայում իմաստի ընդլայնում է տեղի ունեցել: Հայերեն համարժեքում *կատու (cat)* բառի փոխարեն գործածված է *մարդ* բառը:

Իբրև ամփոփում՝ ասացվածքները մի ուրույն շերտ են կազմում հայերեն և անգլերեն լեզուներում և լեզվամտածողության մեջ: Ընդամենը մեկ նախադասությամբ դրանք ընդունակ են կատարելու մի ամբողջական առակի դեր՝ ունենալով խրատական մեծ նշանակություն: Ասացվածքների կենսունակությունն ու ընդունված լինելը ժողովրդի կողմից կարելի է ապացուցված համարել այն փաստով, որ լեզվական այս միավորները եկել են դեռևս ժողովրդական բանահյուսությունից և ավելացվում ու փոխանցվում են մեր օրերում ևս: Լեզվից մեկ այլ լեզու թարգմանելիս դրանք պետք է հնարավորինս պահպանեն այն ողջ լեզվական, հուզարտահայտչական, խրատական և մշակութային ներուժը, որ ամփոփում են իրենց մեջ:

**Եզրակացություն**

Անգլերենի և հայերենի առած – ասացվածքների թարգմանությունը թարգմանչական արվեստի խնդրահարույց կողմերից է: Սրա հիմնական պատճառն այն է, որ լեզվական այդ միավորները ունակ են մեկ նախադասությամբ արտահայտել այնպիսի իրողություն կամ միտք, որ պարունակում է պատմամշակութային, կոլորիտային, հուզական և նմանատիպ այլ հիմքեր: Այստեղից հետևում է, որ ասացվածքների թարգմանումը լեզվից լեզու պետք է արվի քայլ առ քայլ՝ որոշակի հերթականությամբ: Նախ ուսումնասիրվում է աղբյուր լեզվով տրվող ասացվածքը, դրա ծագումնաբանությունն ու նպատակը, ապա փորձ է արվում թիրախ լեզվում գտնել նրա համարժեքը և միայն դրա բացակայության պարագայում կատարվում է նկարագրական թարգմանություն: Հոդվածում տրված են խնդրին առնչվող ամենահաճախ հանդիպող իրավիճակները, տրվում են դրանց հնարավոր լուծումները, որոնք կարող են դիտվել իբրև գիտակիրառական առաջարկներ ոլորտով հետաքրքրվող մասնագետների համար:

**Գրականության ցանկ**

1. Աստվածաշունչ: Հին կտակարան, «Մահ և կեանք ի ձեռս լեզուի», Առակ, ԺԸ, Մոսկվա, «Չես» հրատ., 1994, 1217 էջ:
2. Աստվածաշունչ: Նոր կտակարան, Ավետարան ըստ Մատթեոսի, Գլուխ Ժ, Մոսկվա, «Չես» հրատ., 1994, 359 էջ:
3. Գաբրիելյան Սեդա: Թարգմանաբանության քրեստոմատիա, Երևան, Սահակ Պարթև, 2007, 256 էջ:
4. Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձ քաղաք և բանք Խրատականք և օգտակար Խիկարայ իմաստնոյ, և այլ բանք պիտանիք, Կ. Պոլիս, Ի Տպարանի Ավետ Ջընթլումեանի, 1792, 145 էջ:
5. Ղանալանյան Արամ: Առածանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1960: Սոփերք հայկականք, գլուխ Ա, Վենետիկ, 1853, 530 էջ:
6. Ivanov E. Eugene, Petrushevskaia A. Julia. Etymology of English Proverbs, Journal of Siberian Federal University, Humanities & Social Sciences 5, 2015, pp. 864-872.
7. Oxford Dictionary of Proverbs, ed. By J. Speake, 2008, 625p.
8. World Wide Words. Retrieved 24 April 2007.
9. *Littell. E. A Defense of Superstition. The Living Age. Vol. 311. 1921. p. 427.* As published in the *New Statesman*, 1 October 1921, pp. 41-49.
10. Aunt Hetty's Strategem. Waterford Mirror and Tramore Visiter. Waterford: 4. 1868-10-28.
11. Zimovets Natalia, Matveeva Anna. The Origin of English Proverbs and Sayings., In: Current Issues of Translation Studies and practice of Translation, N. Novgorod: Biuro perevodov “Al’ba”, 2013, No. 3.

**ENGLISH AND ARMENIAN PROVERBS AND THE PROBLEM  
OF THEIR EQUIVALENCE**

**Nelly Ter-Vartanova**

Brusov State University, Chair of English

[nelltvartanova@gmail.com](mailto:nelltvartanova@gmail.com)

***Abstract***

This article examines English and Armenian proverbs, which form a unique linguistic layer in both languages. Coming from folklore, they have not lost their vitality and relevance, are loved and accepted by the people. Some proverbs have deep historical roots, coming from the ancient past. There are also versions that have been created over time and quickly adopted by people. In all cases, when transferred from language to language, these linguistic units must maintain their meaning and cultural originality. This is why the translation of proverbs contains certain difficulties, the solutions to which are given in the article. In all cases, the translated equivalent must be able to convey the flavor and meaning of the original. Sometimes, back-translation can help with the question, serving as the best test of the quality and accuracy of the translation performed. As with any linguistic unit, the best equivalence in the case of idioms is when the colour, spirit, and ideological basis of the source language are preserved, and at the same time, it is understandable and acceptable to the listener and reader of the target language.

***Keywords:*** Proverb, English, Armenian, translation equivalent, linguistic thinking, folklore.

Ներկայացվել է՝ 10.10.2025թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 21.11.2025թ.